ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

ՀՀ ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ, ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԵՎ ՀՐԴԵՀԱՅԻՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՏԵՍՉԱԿԱՆ ՄԱՐՄՆԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԽՈՐՀՐԴԻ 2023 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 30-Ի ՆԻՍՏԻ

ք. Երևան **«30» մարտ 2023թ.**

2023 թվականի մարտի 30-ին տեղի ունեցավ Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության, տեխնիկական և հրդեհային անվտանգության (այսուհետ՝ Տեսչական մարմնի) Կառավարման խորհրդի (այսուհետ՝ ԿԽ) հերթական նիստ՝ հեռակա քվեարկությամբ:

Օրակարգում ընդգրկված հարցերին վերաբերող համապատասխան նյութերը սահմանված ժամկետում ներկայացվել են Կառավարման խորհրդի անդամների էլեկտրոնային հասցեներին:

Օրակարգում ընդգրկված էին հետևյալ հարցերը.

1. Իրավաբանական բաժնի պետի (71-28.1.բ-Ղ4-1) և իրավաբանական բաժնի գլխավոր մասնագետի (71-28.1.բ-Մ2-3) պաշտոնի անձնագրերում կատարել համապատասխան լրացումներ. սահմանել իրավաբանական բաժնի պետին որպես Հակակոռուպցիոն ծրագրերի պատասխանատու, իսկ իրավաբանական բաժնի գլխավոր մասնագետին՝ Հակակոռուպցիոն ծրագրերի պատասխանատուի փոխարինող անձ:

Քվեարկությանը մասնակցում էին՝

Ա. Փամբուխչյան	- ՀՀ արտակարգ իրավիճակների նախարար (խորհրդի նախագահ)
Գ. Սանոսյան	ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարար
Ա.Դանիելյան	- ՀՀ վարչապետի աշխատակազմի տեսչական մարմինների աշխատանքների համակարգման գրասենյակի ղեկավարի պարտականությունները կատարող
Ա"Հարությունյան	ՀՀ արդարադատության նախարարի տեղակալ
Ն. Տերյան	ՀՀ էկոնոմիկայի նախարարի տեղակալ
Ա. Ղուլարյան	Քաղաքաշինության կոմիտեի նախագահ
Ս. Թովմասյան	Կադաստրի կոմիտեի ղեկավար

Տ. Բաբայան	Հայաստանի արդյունաբերողների և գործարարների միության ներկայացուցիչ (համաձայնությամբ)
Ս. Հովսեփյան	Ճարտարապետության և շինարարության Հայաստանի ազգային համալսարանի ռեկտորի խորհրդական, տեխնիկական գիտությունների թեկնածու

Քվեարկությանը չեն մասնակցել՝

Ա.Ավանեսյան - ՀՀ ֆինանսների նախարարի տեղակալ

Տ. Քեյան - «ՓՄՁ համագործակցության ասոցիացիա» ՀԿ-ի ներկայացուցիչ

Դ. Սողոմոնյան - «Հայաստանի ազգային ագրարային համալսարան» հիմնադրամի ագրարային ճարտարագիտության ֆակուլտետի հողաշինարարություն և հողային կադաստրի ամբիոնի ասիստենտ, համալսարանի գիտական խորհրդի անդամ, տեխնիկական գիտությունների թեկնածու

Քվեարկությունը համարվում է կայացած:

Քվեարկության արդյունքները՝ 9 կողմ, 0 դեմ:

Սույն արձանագրությանը ծանոթանալուց և հավանություն տալուց հետո Կառավարման խորհուրդը որոշեց.

1. Հավանություն տալ Իրավական աջակցության և փաստաթղթաշրջանառության վարչության իրավաբանական բաժնի պետի (71-28.1.բ-Ղ4-1) քաղաքացիական ծառայության պաշտոնի անձնագրի փոփոխությանը.
2. Հավանություն տալ Իրավական աջակցության և փաստաթղթաշրջանառության վարչության իրավաբանական բաժնի գլխավոր մասնագետի (71-28.1.բ-Մ2-3) քաղաքացիական ծառայության պաշտոնի անձնագրի փոփոխությանը:

Կառավարման խորհրդի նախագահ՝ **Ա. Փամբուխչյան**

Կառավարման խորհրդի քարտուղար՝ **Ն. Մելիքսեթյան**